117ա ... Անտոն — Բ. (2) շամտան եբեր, (2) շապիք։ Իրեանց Առաքէլն— մէկ խաչ, մէկ սկու մահրամայ, մէկ լաւ զունար, մէկ լաւ ճառ, Գ. (3) փոռանկի ծաղիկ։ Իրան Գրիգորի կին — երեք մէկ ջուխտ փէշկիր, մին պլեխտուն[87] պարձ։

117բ ... Առաքէլի դուստր Համազն — մէկ զառլու սկու տակի ձանկոց, Բ. (2) ժամի փոքր խաչվառ, մէկ մասնատուպ։

118ա ... Մուղամէնց։

118բ ... Վարդաշահանց Զաքարի որդիք Սարգիսն և Փոլաթն — մէկ զառբաբ շուրշառ[88]։

119ա ... Շահվելոնց Թաթոսն — մին լաւ կորփիւրայ, մին լաւ զուֆլ[89]։

120ա ... Շահվէլոնց Յովանէսն և թոռունք՝ Եսաւն, Աւումն — տվին Բ. (2) սկու մահրամայ, մէկ Աւետարան խաչովն, մէկ սկու սուրմայ մահրամայ։

121ա ... Բէկիարէնց Սարգիսն — Ա. (1) պատկեր բերաւ յեկեղեցոյն։

122ա ... Տէր-Բարդուղիմէոսն և իւր թոռն Խաչումն — ետուր մէկ արձաթէ աղաւնի։

123ա ... Աթաճան, իւր տղա Երանի — Ա. (1) պատկեր ետուն Սբ. [Յակոբայ]։

124ա ... Երիջանն։

125ա ... Թանիսէնց Գրիգորն — մէկ մեծ պատկեր[90] ետուր, Ա. (1) Տօնացոյց ետուր։

... Թանիսէնց Մինասն և իւր որդի Սարգիսն — ետուն մէկ լաւ կարմիր քիմխայ շուրշառ։

126ա ... Տէր-Յոհան և իւր հայր Գրիգորն — մէկ Յիսուս Որդի, մէկ Զայնաւոր գիրք, մէկ գիրքակալի շապիկ, Բ. (2) զանգակ։

127ա ... Փշրկէնց Աթանեայն — Ա. (1) փոքր կարպետ, Ա. (1) շաբիք։

128ա ... Նասիպէնց Յոհաննն—մէկ փոքրիկ արծաթէ խաչ ետուր։

... իւրանց որդիքն և թոռունքն և Նասիպ և Շիրինն — մէկ զառպասպ շուրջառ։

129ա ... Ճարակ մահդասի Հայրապետն — Ա. (1) պատկեր, Ա. (1) զանկակ, Ա. (1) կանթեղի ջահ, (1) Բուրսու կարպետ։

...Ճարակ Օվանէսի որդիք՝ Հայրապետն և իւր եղբայր Էվազն — ետուն մէկ լաւ զառպաբ շուռշառ։

129բ ... Ջանամիրէնց Ղազարն, Միրզէն — Ա. (1) Գիրք Գանձի ետ Սբ. Յակոբայ։

130ա ... Միրզէն — մէկ լաւ ջրբին[91] ետուր, Մազրումն[92] է։

131ա ... Ղափանցի մահդասի Ասլանն։

132ա ... Իլանչի Կիրակոսն։

---

87 հավանաբար պրակ. بلاون — կլապաուն կամ կլապիտոն բառն է, որ նշանակում է մետաքսե գույնզգույն թելերով բանված։

88 ջնջված։

89 արաբ. قفل — կողպեք։

90 ջնջված։

91 ջրարբին, ոռոգվող հողամաս։

92 արաբ. مزرعة — ագարակ բառից, այսինքն գյուղի հանդում։